<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>>ԲԲԸ
0002, ք. Երևան, Ամիրյան փ. 23/1,
հեռ. (+374 10) 510-910, 8686,
էլ. փոստ bank@aeb.am

«ՇԱՀԱՎԵՏ» ԱՎԱՆԴԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ....

ք. .... «..........» .... 20 թ.

<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ-ն, հետագայում՝ ***Բանկ,*** մի կողմից և …………………..……………………………(ՖԱ անվանում) հետագայում ***Ավանդատու,*** մյուս կողմից**,** կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Ավանդատուն Բանկում ներդնում է Ավանդ՝
…......…………………………………………..………...……………..…………………………………………………………………………………
……………………………………………………………………………………………գումարի չափով (այսուհետ՝ Ավանդ)։
(գումարը թվերով, տառերով, արժույթի տեսակը)

1.2. Ավանդը ներդրվում է ……(………..………………..……) օրով՝ «….……» ……………………………..…… 20…..….թ.-ին Ավանդատուին վերադարձնելու պայմանով:

1.3. Ավանդի դիմաց Բանկը վճարում է տոկոսագումար՝ սույն պայմանագրի 2-րդ մասով սահմանված չափով, կարգով և ժամկետներում:

1.4. Ավանդի մուտքը, վերադարձը և տոկոսագումարի վճարումը կատարվում է Ավանդատուի կողմից անձը հաստատող փաստաթուղթը ներկայացնելու դեպքում: Բանկում գումարի մուտքը հավաստվում է Բանկի մուտքի փաստաթղթով, իսկ ելքը՝ գումարի ելքագրման մասին Ավանդատուի կողմից ստորագրված փաստաթղթով /ելքի օրդեր կամ այլ փաստաթուղթ/:

1.5. Ավանդատուն սույն պայմանագրի ստորագրումով հաստատում է, որ մինչև սույն պայմանագրի կնքելը Բանկը Ավանդատուին տրամադրել է Ավանդի տեղեկատվական ամփոփագիր /այսուհետ՝ տեղեկատվական ամփոփագիր/:

1.6. Ավանդատուն համաձայն է, որ Բանկը «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքով սահմանված Ավանդատուին պարտադիր ներկայացման տեղեկատվությունը /այսուհետ՝ պարտադիր տեղեկատվություն/ տրամադրի իրեն հետևյալ լեզվով և եղանակով՝

հայերեն ☐ ռուսերեն ☐ անգլերեն ☐

Բանկի տարածքում՝ ☐ .... Փոստով՝ ☐ ....
(հասցեն) (հասցեն)

Էլեկտրոնային փոստով ☐ .... Այլ՝ ☐ ....
(հասցեն) (նշել կապի միջոցը)

....
(Ավանդատուի ստորագրությունը)

Ծանոթություն՝ *Ավանդատուն պետք է ընտրի հաղորդակցման նախընտրած լեզուն և եղանակներից որևէ մեկը ✔ նշանով, լրացնի հասցեն, չընտրած մյուս բոլոր լեզուները և եղանակները նշի Z տառով և ստորագրի, ինչը նշանակում է, որ Ավանդատուն հրաժարվել է մյուս եղանակներով հաղորդակցվելու իրավունքից:*

1.7. Սույն պայմանագրի 1.6 կետում Ավանդատուի նշած հաղորդակցման եղանակը կարող է Ավանդատուի կողմից փոփոխվել Բանկին գրավոր դիմում ներկայացնելով:

2. ԱՎԱՆԴԻ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐԻ ՀԱՇՎԱՐԿԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Ավանդի մնացորդի վրա հաշվարկվում է տոկոսագումար՝ տարեկան ……(……………………)% տոկոսադրույքի չափով, փաստացի օրերի դիմաց տարին ընդունելով 365 օր, նահանջ տարին՝ 366 օր:

2.2. Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը կազմում է ………(…..…..…………….)%:

2.3. Ավանդի տոկոսագումարը հաշվարկվում է Ավանդը Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու նախորդ օրը:

2.4. Ավանդի տոկոսագումարը Ավանդատուի ցանկությամբ վճարվում է ՀՀ դրամով/ Ավանդի արժույթով ` .... :
(ժամկետի վերջում)

2.5. Ավանդը կամ դրա մի մասը մինչև սույն պայմանագրի 1.2 կետով նշված ժամկետի լրանալը պահանջելու դեպքում՝ սույն պայմանագրի 2.1 կետով սահմանված տոկոսագումարի փոխարեն Ավանդի կամ այդ մասի դիմաց հաշվարկվում և վճարվում է տոկոսագումար վաղաժամկետ վերադարձվող Ավանդի վերահաշվարկվող տոկոսադրույքի հետևյալ չափով:

Ավանդի վաղաժամկետ վերադարձի ժամանակահատվածը	**20-ից -29օր**	**30-ից - 90 օր**	**91-ից -182 օր**	**183 ից- 274 օր**	**275 ից - 366 օր**
վերահաշվարկվող տարեկան տոկոսադրույքի չափ					

2.5.1. Եթե Ավանդը կամ դրա մի մասը պահանջվել են սույն պայմանագրի երկարաձգված ժամկետում, ապա նախորդ ժամկետի(ների) համար վճարվում է 2.1 կետով սահմանված տոկոսագումարը, իսկ տվյալ ժամկետի համար Ավանդի կամ այդ մասի դիմաց հաշվարկվում և վճարվում է տոկոսագումար՝ երկարաձգման պահին տվյալ ավանդատեսակի վաղաժամկետ վերադարձման համար Բանկում գործող պայմաններով:

2.6. Ավանդի տոկոսագումարը 2.4 կետով սահմանված ժամկետում չստանալու դեպքում դրանց վրա լրացուցիչ տոկոսագումար չի հավելագրվում:

2.7. Սույն պայմանագրի 1.2 կետում նշված ժամկետը լրանալուց հետո Ավանդը չպահանջելու դեպքում, սույն պայմանագիրը համարվում է երկարաձգված.

2.7.1. ☐ նույն ժամկետով (այդ թվում՝ շարունակաբար յուրաքանչյուր երկարաձգված ժամկետի ավարտից հետո՝ առավելագույնը երեք անգամ)՝ երկարաձգման պահին տվյալ ավանդատեսակի համար Բանկում գործող պայմաններով:

2.7.2. ☐ ցպահանջ ավանդների համար Բանկում գործող պայմաններով: Ցպահանջ ավանդի համար Բանկը հաշվարկում և վճարում է տոկոսագումար՝ տարեկան 0 % չափով, եթե տոկոսադրույքի այլ չափ չի սահմանվում Բանկի Սակագներով:
....
(Ավանդատուի ստորագրությունը)

Ծանոթություն՝ *Ավանդատուն պետք է ընտրի տարբերակներից որևէ մեկը ✔ նշանով, իսկ չընտրված տարբերակը նշի Z տառով:*

2.8. Սույն պայմանագրի 2.7.2 կետով սահմանված ցպահանջ ավանդի տոկոսադրույքի չափը նվազեցնելու դեպքում Բանկը կիրառում է այն Ավանդատուին այդ մասին տեղեկացնելուց տասնհինգ օր հետո:

2.9. Ավանդին գումարներ չեն կարող ավելացվել՝ բացառությամբ Ավանդի վերադարձման ժամկետը երկարաձգվելու դեպքում՝ միայն երկարաձգման օրը և ոչ ավել Ավանդի մնացորդային գումարի չափից:

2.10. Սույն պայմանագրի 2.1 կետով սահմանված տոկոսադրույքը փոփոխման ենթակա չէ սույն պայմանագրի 1.2 կետում նշված Ավանդի վերադարձման ժամկետում:

2.11. Ավանդի դիմաց Ավանդատուին վճարվող տոկոսագումարը հարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափով:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Բանկը պարտավորվում է՝

3.1.1. Ընդունել Ավանդը և վերադարձնել այն, վճարել տոկոսագումար՝ սույն պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետներում:

3.1.2. Պահպանել Ավանդի գաղտնիությունը՝ օրենքով սահմանված կարգով:

3.1.3. Ավանդատուի հետ հաղորդակցվել, այդ թվում՝ «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքով սահմանված Ավանդատուին պարտադիր ներկայացման տեղեկատվությունը տրամադրել Ավանդատուին նրա ցանկությամբ՝ սույն պայմանագրի 1.6 կետով սահմանված եղանակով:

3.1.4. Առնվազն երեսնօրյա պարբերականությամբ սույն պայմանագրի 1.6 կետով սահմանված եղանակով Ավանդատուին տրամադրել Ավանդատուի հաշվի քաղվածքը, բացառությամբ եթե այդ ժամանակահատվածում տվյալ հաշվով չի կատարվել դեբետագրում կամ կրեդիտագրում:

3.1.5. Բացառությամբ 3.1.4 կետով սահմանված հաճախականության, Ավանդատուի կողմից պահանջ ներկայացնելու դեպքում 5-օրյա ժամկետում տրամադրել հաշվի քաղվածք Բանկի հայտարարած Սակագներով:

3.2. Բանկը իրավունք ունի՝

3.2.1. Ավանդի ընդունման և սպասարկման համար գանձել Ավանդատուից վճարներ Բանկի հայտարարած Սակագներով և տեղեկատվական ամփոփագրով սահմանված չափով:

3.2.2. Ավանդի մուտքը, վերադարձը և տոկոսների վճարումը կատարել միայն Ավանդատուի կողմից անձը հաստատող փաստաթուղթը ներկայացնելու դեպքում:

3.2.3. Այլ անձանց լիազորությունները չընդունել, եթե դրանք ձևակերպված չեն սույն պայմանագրի 3.3.3 կետին համապատասխան:

3.3 Ավանդատուն պարտավորվում է՝

3.3.1. Ավանդը և տոկոսագումարը ստանալու համար ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթը:

3.3.2. Ավանդի ընդունման և սպասարկման համար վճարել Բանկին Բանկի հայտարարած Սակագներով և տեղեկատվական ամփոփագրով սահմանված չափով գումար:

3.3.3. Այլ անձանց լիազորությունները հավաստել նոտարական կարգով տրված լիազորագրով կամ անձամբ Բանկում տրված գրավոր լիազորագրով, որը պետք է ձևակերպվի հստակ և հնարավոր լինի նույնացնել նման պահանջ ներկայացնող անձի հետ:

3.4. Ավանդատուն իրավունք ունի՝

3.4.1. Պահանջել Բանկից Ավանդի վերադարձ և հաշվեգրված տոկոսների վճարում՝ սույն պայմանագրով սահմանված կարգով, չափով և ժամկետներում:

3.4.2. Ավանդին ավելացնել լրացուցիչ դրամական գումարներ սույն պայմանագրի 2.9 կետով սահմանված ժամկետներում և պայմաններով:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Բանկի կողմից Ավանդը վերադարձնելու կամ տոկոսները վճարելու պարտավորությունը չկատարելու կամ ուշացնելու դեպքում՝ յուրաքանչյուր ուշացած օրվա համար Բանկը վճարում է տույժ՝ չվճարված /չվերադարձված/ գումարի 0.02 % չափով:

4.2. Բանկը երաշխավորում է Ավանդի վերադարձը իր ակտիվներով:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1. Ավանդի ընդունման և սպասարկման, դրանց համար վճարների չափն ու կատարման կարգը սահմանվում է Ավանդի տեղեկատվական ամփոփագրով և Բանկի Սակագներով: Սակագները հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը, հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքէջում (www.aeb.am) և Բանկի գտնվելու վայրում: Ավանդատուի պահանջով Բանկը Սակագները տրամադրում է անվճար: Սակագներում Բանկը միակողմանի կարող է կատարել փոփոխություններ, որոնք ուժի մեջ են մտնում Բանկի կայքէջում և Բանկի /մասնաճյուղերի/ գտնվելու վայրում հրապարակվելուց 15 օր անց, եթե սույն պայմանագրի 1.6 կետում կամ իր դիմումում Ավանդատուն որպես տեղեկացման եղանակ նշել է Բանկի տարածքում, իսկ այլ եղանակ նշելու դեպքում՝ այդ եղանակով փոփոխությունների մասին Բանկի տեղեկացնելուց 15 օր անց: Ավանդատուն հաստատում է, որ ծանուցվել է Բանկում ներդրված ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին:

5.2. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Ավանդը ներդնելու պահից:

5.3. Պայմանագիրը Բանկի կողմից պետք է լինի ստորագրված առնվազն երեք աշխատակցի կողմից և կնքվի Բանկի կլոր կնիքով:

5.4. Պայմանագրի օրինակը կորցնելու դեպքում Ավանդատուի դիմումով տրվում է պայմանագրի պատճեն:

5.5. Սույն պայմանագրի ցանկացած փոփոխություն կատարվում է Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

5.6. Ավանդատուն իր իրավունքների պաշտպանությունը կարող է իրականացնել օրենքով սահմանված կարգով՝ ֆինանսական համակարգի հաշտարարին կամ դատարան դիմելու միջոցով:

5.7. Պայմանագիրը կնքվել է երկու օրինակից, որից մեկական օրինակ տրամադրվել է յուրաքանչյուր կողմին:

6. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԲԱՆԿ	ԱՎԱՆԴԱՏՈՒ
<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ	……
հասցեն ……	ԱԱՀ
Ներկայացուցիչ ……	……
Լիազորագիր ……	հասցե
---	---
ստորագրություն	անձը հաստատող փաստ. տվյալներ

ստորագրություն	,……..
---	ստորագրություն
ստորագրություն	